Հակառակ դէպքում Յակոբի կանայքը ինչ հիմք ունէին տրտնջալու, իբր թէ նոցա հայրը իւրացրել էր, ինչպէս իրենք են ասում, «ուտելով զարծաթ մեր», այսինքն նրանց վճարած գլխագինը [1]։

Մահմետական իրաւունքի մէջ յայտնի է, որ փեսացուի կողմը վճարում է հարսնացուի հօրը որոշեալ գլխագին, որ կոչւում է մահր։ Մահմետական իրաւունքի Հանէֆիտական դպրոցին պատկանող յայտնի մի լուսաբանութեան՝ Հեդայի մէջ՝ խօսւում է մահրի մասին, իբրև մի վճարի, որի մի մասն աղջկայ ծնողները գործադրում էին օժիտի համար և յատկացնում էին 'ի սեփականութիւն աղջկան, ամուսնու տունը գնալիս։

Գերմանական հին օրինագրքերից երևում է, որ հարսնացուի հօրը վճարուած գլխագնի ամբողջ գումարից պատրաստում էին հարսի օժիտը։ Նոյն իսկ Տակիտոսը իւր «Germania» աշխատութեան XXIII գլխում հաստատում է, թէ իւր ժամանակակից գերմանացիների մէջ սովորութիւն կար, որ «ինչպէս փեսան է բերում հարսնացուի համար օժիտ (իմա գլխագին), նմանապէս էլ աղջիկը բերում էր իւր փեսացուի տունը օժիտ»։

Իրլանդական հին իրաւունքի մէջ էլ նկատելի է օժիտի գոյացումը գլխագնից այն փաստի հիման վրայ, որ փեսացուն իւր վճարելիք գլխագնի գումարը բաժանում էր, տալով մի մասը աղջկայ հօրը, իսկ միւսը—իրեն հարսնացուին՝ իբրև նրա սեփականութիւն, որ վերջինս անշուշտ բերում էր իւր հետ որպէս օժիտ՝ ապագայ ամուսնու տունը։

Օսերը 1866 թուականին Կովկասում, երբ տեղական վարչական մարմինների առաջարկութեամբ և իրենց փոխադարձ համաձայնութեամբ որոշել էին վերացնել իրենց բարքերից միքանի, իրենց հայեացքով վնասակար սովորութիւններ, վճռել էին՝ ապագայում հարսնացուի համար վճարուելիք գլխագնի՝ նրանց լեզուով *իրաղի*՝ մի երրորդ

[1] М. Ковалевскій—Первобытное право, Вып. I *երես* 144

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան